Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱԳԾՈՒՄ (2 ԿՆ), ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ (ՄԹ) ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (7.20ՃՏՊ012)**
ECTS կրեդիտ	36 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • ձևակերպել հետազոտության արդիականությունը, նպատակը, խնդիրները, մեթոդակարգը, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, • ներկայացնել ուսումնասիրվող աշխատանքը՝ հիմնվելով ժամանակակից թվային տեխնոլոգիաների վրա, • ընտրել ուսումնասիրության համար անհրաժեշտ մեթոդակարգը, • հիմնավորել ստացված արդյունքները, վերլուծել դրանք՝ հաշվի առնելով հատուկ գրականության մեջ գրանցված տվյալները, • կազմել կատարված աշխատանքի հաշվետվությունը, ռեֆերատը կամ հոդվածը, • ներկայացնել գրականության աղբյուրների ինքնուրույն ուսումնասիրությունը և ամփոփումը, *(կարողություններ)* • բացահայտել աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, • կատարել հավաքված գիտական նյութի վերլուծություն, • դասակարգել, մշակել և ինքնուրույն ձևակերպել եզրակացությունները, • ներկայացնել կատարած հետազոտության ստացված արդյունքները, • մշակել և իրականացնել թեզի գործնական մասի առաջարկ-նախագիծը՝ անհրաժեշտ պահանջվող գծագրերի կազմով, • կիրառել ձեռք բերված գիտելիքները գործնական խնդիրների լուծման ժամանակ,

	• բացահայտել ուսումնասիրվող թեմայի հեռանկարային ուղղությունները՝ հետագա հետազոտությունների բացահայտման համար:
Մագիստրոսական թեզի ընթացքի գնահատման փուլերը և պաշտպանության գործընթացի նկարագրությունը	Ավարտական աշխատանքը կատարվում է երկու տարում՝ Առաջին տարում իրականացվում է. ✓ թեմայի հիմնավորումը և հիմնական գաղափարների առաջադրումը, ընդհանուր դրույթների և սկզբունքների մշակումը, քննարկումը, մագիստրոսական թեզի առաջադրանքի վերջնական լրամշակումը և հաստատումը, ✓ նախապատրաստվում են հայեցակարգային մոտեցումները, քննարկվում են համապատասխան լուծումներ: Ներկայացվում և հաստատվում են հիմնական հայեցակարգային լուծումները: Երկրորդ տարում. ✓ նախապատրաստվում և քննարկվում են աշխատանքի հիմնական տեսական և նախագծային առաջարկությունները, կատարվում է հիմնական տեսական և նա–խագծային լուծումների վերջնական մշակում և ներկայացում, ✓ իրականացվում է մագիստրոսական թեզի վերջնական լրամշակում, քննարկում ամբիոնում, տեսական, գիտական, գրաֆիկական և այլ անհրաժեշտ նյութերի ամփոփում, ձևավորում և պաշտպանության նախապատրաստում: Աշխատանքի կատարման հսկողությունը իրականացնում է ամբիոնը՝ 6 փուլով: 3-րդ և 6-րդ փուլերի ավարտին ուսանողը ներկայացնում է հաշվետվություն՝ կուրսային նախագծերի տեսքով: Մագիստրոսական թեզը ներկայացվում է հրապարակային պաշտպանության: Գնահատվում է ավարտական ատեստավորման հանձնաժողովի կողմից՝ 20 միավորային համա–կարգով: